

ԳՐԱԿԱՆ ԼԵԶԿԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՐԱՖՖՈՒ  
ՅՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՌՈԼԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Րաֆֆու ստեղծագործությունը, մեր կարծիքով, ունեցել է լեզվական երկու գրարար և աշխարհարար փուլեր, որոնցից աշխարհաբարը ժամանակագրական առումով անցել է երեք՝ ա) մինչ XIX դ. 70-ական, բ) 70–80-ական և գ) 80-ական թվականներին գրած ստեղծագործություններում գործածված լեզվական շրջաններով<sup>1</sup>:

Աշխարհարարի նորմավորման և լեզվամշակման երրորդ շրջանում Րաֆֆին մեծակտավ ստեղծագործություններին զուգահեռ դրում է հրապարակախոսական ընույթի հոգվածներ, պատմական ուսումնասիրություններ, րազմաթիվ նամակներ, այլ լեզուներից կատարում թարգմանություններ:

Աշխարհարարի մշակման ու կանոնավորման երկրորդ ուղղություն<sup>2</sup>, ինչպես նաև այդ ուղղությանը հետևող ժողովրդի առավել զարգացած ներկայացուցիչների ջանքերով արևելահայ լեզուն 80-ական թվականներին ձեռք է բերում մի այնպիսի մակարդակ, որը, չնչին բացառություններով, կարելի է համարել արևելահայերենի կանոնավորման վերջնափուլ:

Րաֆֆու ստեղծագործություններում հրապարակախոսության լեզուն նորմավորվելիս՝ անցնում է այն նույն փուլերով, ինչ-որ հեղինակի գեղարվեստական ստեղծագործություններին:

Դեռևս 1875–1876 թթ. գրած հոգվածների ուսումնասիրություններից պարզվում է, որ լեզվամշակման հարցերը հեղինակին րավականին մտահոգել են, և նա աշխատել է իր հրապարակախոսական ընույթի հոգվածներում, որքան հնարավոր է, հրաժարվել գրարարյան ձևերի օգտագործումից, թեև մինչև վերջ գա չի հաջողվել գրողին, րայց, այնուամենայնիվ, քանակական առումով այդ ձևերը սլակասել են՝ տեղի տալով ժամանակի խոսակցական լեզվամիավորներին: Այսպես, նրա բառապաշար սկսում են մուտք գործել խոսակցական այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ լույս քցել (9,94)<sup>3</sup> սաղ (9,95), բոստան (9,106), կնանիք (9,108), ռոճիկ (9,114), պսակվել (9,114), ապրանքների ծախելում (9,115), մարդերից (9,115), հանդ (9,117), ձգտողությունները (9,117), երկաթի պնդությունը համոզմունքներ

1 Գրական և ժողովրդական լեզվամտածողությունների մասին մանրամասն տե՛ս Ռ. Ա. Վ. Ե. Ի. Ս. Յ. Ն. Լեզվի գործառական տարբերակների ըզվանգակության և արտահայտության պլանների փոխհարաբերության հարցի շուրջ. – ՀՀ ԳԱԱ «Լրագր հասարակական գիտությունների», 1991, N 4:

2 Այդ մասին մանրամասն տե՛ս Գ. Ջ ա հ ու կ յ ա ն և ուրիշներ. Հայոց լեզու. I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 32–34:

3 Ր ա ֆ Ի. Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ). հ. 9, Երևան, 1958 թ. (փակագծում առաջին թվանշանը ցույց է տալիս հատորը, երկրորդը՝ էջը, ընդգծումները՝ Ռ. Ա.):

(9,117), որդիք (9,118), սիրահարվել մեկի վրա (9,121), միջոցում (9,124), ոչ մեկը մտածեց (9,124), նշանավոր մարգիկ (9,125), օրից (9,125), ասեցինք (9,125), լրագրներ (9,126), գյուղորայք (9,127), պարապվում (9,133), բահ շինել (9,135, 136), բացավ (9,141), արագ (9,143), իրարու (9,223) և այլն: Շատ են նաև ժողովրդախոսակցական լեզվում գործածվող այնպիսի բառեր, որոնք փոխ են առնվել ուրիշ լեզուներից բոստան խայայ (քարապարտեզ) (9,107), մուշտահիդ (9,121), սահաբդիվան (դիվանի պետ) (9,122), բաֆիրներ (անհավատներ) (9,123), Ֆրանգներ (9,124), մադրասայներ (վարժապետներ) (9,126), թուման (9,126), գարգարբաշի (9,139), Ֆինջաններ (բաժակներ) (9,140), փանջարա (լուսամուտ) (9,140), Ֆարմաններ (9,145), դառաֆխանա (դրամ կտրելու տուն) (9,145), թաջիրբաշի (վաճառականապետներ) (9,149), դալանտերեական, արբիտրաժ, սուդ (9,150), արբշում (մետաքս) (9,152), քիչմիչ, սաբխա, փուստա, բադամ, փաղչ-բադամ (9,153), թամբաքու (9, 153), խինա (հինա) (9,153), սարվազ (զինվոր) (9,154), բալ մասկարագ (9,156), սուլթան, յավար, սարհանդ, սարթիբ, միրֆանջ, ամիրթուման, սուլթաֆուլ-մուլք (տերության քաջ), մասիրուլ դովլա (տերության սուրբ) (9,156), ռայաթներ (հպատականեր) (9,157), մուլաներ, սեիդներ (9,161), մագադիններ (9,224) և այլն: Հանգիպում են արևմտահայերեն ձևեր՝ դործե (9,120), հարցեն (9,125), կմտնե, կլրտեսե (9,144) և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անցյալ դարի 70-ական թվականների կեսերին և մասնավորապես 1875–1876թթ. լեզվի գրավոր տարբերակը գեոևս ազատորեն օգտվում էր գուգահեո գործածվող բաղմազան ըրաոմիավորներից (գրաբար, բարբաո, խոսակցական լեզու, փոխառություններ, արևմտահայերեն): Այս շրջանում բարբաոային, ժողովրդախոսակցական բառերին գումարվում են նաև ղգալի քանակությամբ արաբապարսկա-թուրքական լեզուներից հայերենին անցած բառեր, որոնք գարծել էին պարսկական և թուրքական տիրապետության տակ գտնվող ժողովրդի բառասլաշարի անքակտելի մասը:

Այստեղ հարկ է ընգգծել, որ ըերված օրինակներից շատերը ոչ թե ստեղծագործության հերոսների ըրաոպաշարից են քաղված, այլ հեղինակի, որտեղ ուղեգրությունների, նամակների ձևով ընթերցողներին է ներկայացվում հայ ժողովրդի վիճակը՝ Պարսկաստանում և թուրքիայում: Այսպես, կարելի է նման ըրառերի ցանկը հասցնել հարյուրների, սակայն մեղ համար երևուլթն է կարևորը, այն, որ հեղինակի մոտ հիշյալ ժամանակաշրջանում լեզվի «բարբաոայնացում» նկատվում է նաև հրապարակախոսության մեղ և ուղեգրական նոթերում: Բայց և այնպես այս ասպարեղում կա Րաֆֆուն արգարացնող մի նուրբ հանգամանք. չէ՞ որ ուղեգրությունները գեղարվեստական երկեր չեն, և հեղինակը արձանագրում է օբյեկտիվ իրականությունը, իր շրջագայած վայրերի բնակիչների կենցաղն ու սովորությունները, որի պատճառով էլ ստիպված է գործածել և՛ քրգերեն, և՛ ասորերեն, և՛ պարսկերեն, և՛ թուրքերեն և՛ անգամ ղարաչիերեն (գնչուերեն) բառեր, ինչպես նաև հայերեն գանազան բարբաոներով գրված ամբողջ պարբերություններ: Այսպես, օրինակ, Ալաշկերտից գաղթածների պատմածները նա տալիս է իրենց իսկ բարբաոով:

- Ինչ ըսեմ, աղբար, աստված առաջ մըր խելք մըր ձեռքեն առեց, ապա մըր տունն մըր ձեռքով ավրեցինք... էլ ըսկի չիմացանք, թե ինչ ըրինք... թորկինք մըր կանաչ արոտներ, մըր պաղ-պաղ աղբյուրներ... անտեր թորկինք մըր տունն ու տեղ...»<sup>4</sup> Այստեղ գտնուվ ենք խիվանդ, կիդար, խրաչք, խող, բալքի, աղեկ, հըմեն և նման այլ բարբառային բառեր, որոնք, սակայն, հեղինակինը չեն:

Եվ միանգամայն բնական է, որ Րաֆֆու այդ տարիների (1875–1876 թթ.) հրապարակախոսությունների մեջ շատ են հանգիպում նաև նախորդ շրջանից փոխանցված լեզվական զուգաձևություններ: Ուրեմն, Րաֆֆին ինքը նույնպես տուրք է տվել ժամանակի լեզվամտածողությունը: Բայց ասվածի կողքին պետք է նկատի ունենալ, որ մեծ գրողի լեզուն այդ բազմաձևությունների առկայությամբ անգամ որոշ յուրահատկություններ է ցուցաբերում. ա) այդ տարիներին նրա լեզուն թեև աշխարհաբարանում է, և ժողովրդախոսակցական տարրերը սկսում են ավելի հաճախաբար գործածվել, սակայն ժողովրդախոսակցական ձևերի այնպիսի առատ գործածություններ, ինչպիսին աշխարհաբարի մշակման առաջին ուղղության ներկայացուցիչների երկերում է, Րաֆֆու մոտ չեն դիտվում, բ) Րաֆֆու կողմից խոսակցական ձևերի «գրաբարացումը» կատարվում է այնպիսի միավորների ընտրությամբ, որոնք հետագայում դիտվում են որպես գրական նորմային համապատասխանող միավորներ:

Այդ տարիներին Րաֆֆու կողմից գործածված լեզվական զուգաձև ձևերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) գրաբարյան և դրանց զուգաձև արևելահայ աշխարհաբարյան ձևեր, բ) այլ լեզուներից փոխառնված (պարսկերեն, թուրքերեն, ռուսերեն) և աշխարհաբարյան ձևեր, գ) արևմտահայերեն և արևելահայերեն ձևեր, դ) ժողովրդախոսակցական ու բարբառային և նորմավորված գրական ձևեր. ամի (9,129) // թվին (9,185), սորա // սրա, դրա // գորա, նորա // նրա (9,123), նոցա (9,134) // նրանց (9,135), նորանք (9,165) // նրանք, վերա (9,161) // վրա (9,131), յուր // իր, Ղարաղաղու // Ղարաղաղի (9,146), պրիկազչիկ (9,137), դուքան (9,37), դավթար (9,37), ինտրիդան (9,38), համարումը (9,38) (доверия (9,38)), մագազին (9,54), կրիտիկա (9,58), ռոման (9,66), ֆանտազիա (9,66), լեդենդա (9,95), սամավար (9,140), թանգիմաթ (օրենսդրություն) (9,127), սահաբդիվան (դիվանի պետ) (9,127), քաֆիրներ (անհավատներ) (9,123), բաբմազ (դոշար) (9,138), զարդարբաշի (ոսկերչապետ) (9,139), քարավան բաշի (9,148), դործե (9,122), կմտնե, կլրտեսե (9,144), որոնե (9,196), իրա (9,222) // իր (9,227), նեդցնեկ (9,179), լրադրներ // ամսագրեր (9,26), ասեցին (9,125), մարդիկներ (9,190) // մարդիկ (9,192) // մարդիք (9,107), անձինքներ (9,220), դյուղորայք (9,227) և այլն:

Իրան և իրանց խոսակցական ձևերի կողքին, որոնք լայն տարածում ունենին ժամանակի դրավոր խոսքում, 1876 թ. բավականին ընդարձակ գործածություն են սկսում ձեռք բերել նորմավորված ձևերը. իրենք (9,223), իրեն\_ (9,222), իրենց (9,135, 136, 137, 139, 143, 147, 222 և այլն):

<sup>4</sup> Ր ա ֆ ֆ ի ե ժ. հ. 9, Երևան, 1987, էջ 192:

է Հական բայի սահմանական եղանակի ներկայի եզակի երրորդ դեմքի ժխտական խոնարհման ձևն այլ դերբայների հետ եղանակային ձևեր կազմելիս սովորաբար ունենում է չէ ձևը (չէ գնում, չէ ասում և այլն): 1875–1876 թթ. սկսում են տարածվել նորմավորված չի-ով ձևերը՝ չի ուտում (9,137), չի սիրում (9,140), չի ուզում (9,141), ինչպես նաև՝ չի համապատասխանում (9,161), չի կարելի (9,185) և այլն: Սա նշանակում է, որ խոսակցական լեզվում այս և նման ձևերն արդեն քաղաքացիություն լայն իրավունք են ստացած եղել:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ սկսած 1872 թ., երբ Րաֆֆին կապում է «Մշակի» հետ, արևելահայ աշխարհաբարը գրաբարախառն տարբերակից անցում է կատարում դեպի ժողովրդախոսակցական տարբերակը, և 1876 թ. արդեն լեզվում մեծ տարածում են ունենում լեզվական բազմաթիվ գուգահեռ ձևեր: Այդ գուգահեռ ձևերից և ոչ մեկը մյուսի նկատմամբ թե՛ քանակական և թե՛ որակական առումով առավելություններ չի դրսևորում: Եթե նախկինում արևելահայերենը ավելի շատ դրաբարամետ էր, գրաբարյան ձևերը գերակշռում էին աշխարհաբարյաններին, ապա այժմ դրանք հավասարվում են միմյանց: Սա խոսում է այն մասին, որ լեզվի աշխարհաբարացումը հրապարակախոսություն մեջ արդեն կենսունակ ուղի էր բռնել:

1877 թ. Րաֆֆին ամբողջ տարվա ընթացքում դրում է ընդամենը մեկ հոդված<sup>5</sup> «Տեղեկադիրք գավառական հարստահարություն» վերնագրով: Սա բավականին ընդարձակ հոդված է՝ յուրի երկու և կես մամուլ ծավալով: Այս հոդվածի լեզվական ատաղձի քննությունը ցույց է տալիս, որ գրական լեզվի կանոնավորման, նորմավորման հոգսն այստեղ նույնպես հուզել է Րաֆֆուն: Մեր կարծիքով, 1877 թ. նա արդեն լուծած է եղել մի շատ կարևոր հարց. հրապարակախոսություն լեզվի մեջ գրաբարյան ձևերի օգտագործման նպատակահարմարություն ինդիքը: Նա անվերապահորեն մերժում է վերևում հիշատակված դերանունների գրաբարյան բոլոր ձևերը և գործածում դրանց աշխարհաբարյան նորմավորված տարբերակները: Ասվածի լավագույն ապացույցը մեր կողմից հիշատակված հոդվածի լեզվական նյութի քննությունն է, որտեղ Րաֆֆին սա, դա, նա, սրանք, դրանք, նրանք դերանվանական գրաբարյան և աշխարհաբարյան գուգահեռ ձևերից նախապատվությունը տվել է միայն աշխարհաբարյաններին: Այսպես. «Գյուղացին պարտավորվում է կապալառուին և նրա գործակալներին իր տան մեջ ձրիաբար հյուրասիրել և ձրիաբար կերակրել» (9,227), «...նրա երեակայական առաջադիմությունը հուշակող անձնական հաշիվներով կուրացած մարդիկ հայտնում են ...» (9,229), «Նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում» (9,230), «Այս բռնակալը հավիշակում է հայերից նրանց արտերը» (9,237), «Ո՞վ է մեղավոր, որ նրան կողպտում են» (9,249) և այլն:

Գրաբար և աշխարհաբար վերա // վրա գուգահեռ ձևերից հոդվածում դարձյալ դերապատվությունը տրված է վրա աշխարհաբար ձևին: Օրինակ. «...Այժմ մենք գիտենք, թե ինչ է կատարվում բեմի վրա» (9,225), «...Մենք

<sup>5</sup> Ր ա ֆ ֆ ի. Եժ. Հ. 9, 1958, էջ 531:

ընթերցողի ուշադրությունը կդարձնենք պատրիարքարանի «Երկրորդ տեղեկագրքի վրա» (9,230), «Սայիդ փաշայի անիրավությունների դեմ ժողովրդից գանգատներ լինելով, և պատրիարքարանի թագիրների հիման վրա, Բարձ. կառավարությունը հրամանագիր է ուղարկում տեղային կառավարության վրա» (9,234), «Գյուղացիների վրա ... հարկ է նշանակվում» (9,236), «Հարձակվում են վանքի վրա» (9,240), «Այն ժամանակ հպատակների վրա է մնում անձնապաշտպանության հոգսը» (9,249) և այլն:

Դերանվանական գրաբարյան ձևերից Րաֆֆին այս հոդվածում օգտագործում է յուր ձևը աշխարհարար իր ձևին զուգահեռ: Այստեղ թեև իր ձևը առավել շատ է գործածված, բայց այս և հետագայում գրած հոդվածների քննությունը ցույց է տալիս, որ նա աշխատել է օրինականացնել յուրը և դիտել որպես գրական նորմա: Սա, իհարկե, նահանջ էր:

Հոդվածում գործածված գրաբարյան մյուս ձևերը, որոնք աննշան թիվ են կազմում, չնչին բացառություններով, այնպիսի ձևեր են, որոնք հետագայում կամ դառնում են լեզվական քարացած ձևեր, կամ գործածվում են ժամանակի խոսակցական լեզվում: Սա նշանակում է, որ 1877թ. Րաֆֆին գրաբար-աշխարհարար զուգահեռ ձևերի փոխհարաբերության հարցը լուծել է հօգուտ նորմավորված գրական արևելահայ աշխարհարարի, և, պետք է ասել, որ հոդվածի լեզվատաղձի բացարձակ գերակշռող մասը, նույնիսկ ժամանակակից չափանիշներով, գրական է: Մեր ասածը հաստատելու համար «Տեղեկագրքից» բերենք մի ամբողջական հատված. «Գուցե սուլթանի գուռը շատ անգամ ցանկանում է յուր ոչ մահմեդական հպատակներին հանգստություն, կյանքի, գույքի և պատվի ապահովություն շնորհել և աշխատում է բառնալ անիրավությունը, պատժել հարստահարիչներին: Բայց ինչ օգուտ ունեն բարի ցանկությունները, երբ որ գործադրություն չեն գտնում, երբ որ նահանգական և գավառական պաշտոնակալների կամայականությամբ բոլորը մնում են անգործագրելի» (9,242):

Պետք է նկատի ունենալ, որ 1877 թ. գրած «Տեղեկագրքը» Րաֆֆու լեզվամշակման ճանապարհին սահմանային կարելի է համարել, որովհետև գրանից հետո մինչև 80-ական թվականները նրա հրապարակախոսության լեզվում գործադրվող հիշյալ զուգահեռ ձևերը կամաց-կամաց սկսում են տեղի տալ, և այդ ձևերից մեկը սկսում է գերակշռել մյուսների նկատմամբ: Դրանք հիմնականում այնպիսի ձևեր են, որոնք կարողանում են բավարարել ժամանակի լեզվական ճաշակը և գրական նորմայի պահանջները: Մյուս կողմից՝ այդ տարիներին Րաֆֆու հրապարակախոսության մեջ նկատվում է եվրոպական լեզուներից, մասնավորապես ռուսերենից կատարվող փոխառությունների ավելացման միտում: Դրան նպաստում է առաջին հերթին հայերենի և ռուսերենի ավելի սերտ համագործակցությունը, մի բան, որը խարսխվում է նաև այն դրական սպասելիքների վրա, որ ուներ հայ ժողովուրդը ռուսական կայսրությունից:

Գրողի հրապարակախոսության լեզվի քննությունը ցույց է տալիս, որ հիշյալ ժամանակաշրջանում ռուսաց լեզվից փոխառնված բառերի քանակը հեղինակի գործերում բավականին մեծ տոկոս է կազմում: Մեր հավելումներով դրանք հասնում են շուրջ 300-ի: Նշենք դրանցից մի քանիսը. արխատկրատիա, պրոլետարիատ (9,369), իդիոտություն (10,109), ռեմա-

տիզմ (9,392), սալդաթ, աֆիցեր (9,409), կանցելարիական, ֆորմալիստական (9,410), դիպլոմատիա (10,13), կրիտիկա (10,15), կաբինետ (10,113), ֆակտոր (10,144), մուզիկա (10,145), սուդեբնի պրիստավ (10,146), միտրոպոլիտ (10,150), շկոլա (10,157) և այլն: Դրա հետ մեկտեղ ուսեբենից կատարվում են բազմաթիվ թարգմանություններ, որոնցում ոչ միայն գործածվում են այդ լեզվի փոխառյալ բառեր, այլև՝ այդ բառերը լեզվական շրջանառության մեջ են դրվում ուսական գրանշաններով՝ «Карабагский астролог (10,7), Исторический закавказский роман (10,8) «Армянское собрание» (10,44), уроды (10,92), «Записки охотника» (10,134) և այլն:

Այս ամենը հանգեցնում է նրան, որ անցյալ դարի 80-ական թվականներին հաղորդակցման գործընթացում լեզվի գրավոր տարբերակը, ձեռք բերելով արհեստականության որոշ տարրեր, հեռանում է բանավոր հաղորդակցման տարբերակից, որն էլ իր հերթին ժողովրդական լեզվամտածողության հիմքերի խարխուլման պատճառ է դառնում: Պետք է նկատի ունենալ, որ այս փոփոխությունները տեղի են ունենում ոչ միայն առանձին միավորների, այլև լեզվի ողջ համակարգի մեջ, ընդգրկելով թե՛ բառային, թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական մակարդակները:

Արդ, տեսնենք, թե, նախորդ շրջանի համեմատությամբ, ինչպիսի փոփոխություններ է կրում արևելյան աշխարհաբարը այս փուլում:

Մի բան արդեն պարզ է՝ XIX դ. 70-ական թվականների վերջին և 80-ականների սկզբներին Րաֆֆին շատ լավ է դիտակցում, որ հիշյալ լեզվական բազմաձևությունների (խոսակցական տարրերակ, բարբառ, փոխառություններ ուսեբենից և այլ լեզուներից) օգտագործումը լեզվի նորմավորման գործում չի կարող հեռանկարային լինել, որովհետև դրանք սահմանափակում են դրական լեզվի, որպես համազգային հաղորդակցման միջոցի, շրջանակները և նրան տալիս տեղայնացվածության բնույթ: Ահա թե այդ հարցը ինչպես է մեկնաբանում Րաֆֆին կյանքի վերջին տարիներին դրած «Վիպադրությունը ուսահայերենի մեջ» հոդվածում. «Երկար ժամանակ վիսպադրությունը նույն նեղ, միակողմանի շավղով ընթանալով, նույն շավղի վրա մնաց և քարացավ, առանց որևէ առաջադիմություն գործելու» (խոսքը Խ.Աբովյանի և նրա հետևորդների մասին է – Ռ.Ա.): «Նա չկարողացավ նոր լեզու մշակել, որովհետև դրվում էր գեղջկական բարբառով: Նա չկարողացավ ընթերցանություն տարածել, որովհետև հասկանալի էր միայն այն շրջանին, որի բարբառով գրված էր: Եվ այդպես իրանք՝ հեղինակները, իրանց աշխատությունները դատապարտեցին շուտափուլյթ մահվան...»<sup>6</sup>:

Ինչպես երևում է, Րաֆֆին լավ է հասկացել, որ բարբառով և խոսակցական լեզվով ստեղծված ստեղծագործությունները տեղայնացված բնույթ են կրում, և գրանցում գործադրված լեզուն չի կարող համազգային գրական լեզվի դեր կատարել: Ուստի, երբ համեմատում ենք Րաֆֆու 80-ական թվականների և դրան նախորդած տարբեր շրջաններում գրված ստեղծագործությունների լեզուն, պարզվում է, որ բարբառային և խոսակցական

<sup>6</sup> Ր ա ֆ ֆ ի. ԵԺ. Հ. 10, Երևան, 1959, էջ 157:

լեզվատարրերը Բաֆֆու կողմից չեն ընդունվել որպես նորմավորված ձևեր և, անհրաժեշտության դեպքում, դրանք մերժվել են հեղինակի կողմից, փոխարինվելով գրական ձևերով: Ծայրահեղ դեպքերում են միայն նրա գործերում հանդիպում բարբառային և խոսակցական ձևեր, որոնց Բաֆֆին հատկացնում է ոճական գեր: Այդ օրինաչափությունը հատկապես երևում է նրա 80-ական թվականների հրապարակախոսության լեզվի մեջ: Օրինակ, հոդվածներից մեկում, որտեղ խոսվում է Հայ ժողովրդի ճակատագրի մասին, նա գրում է. «... Իսրայել Օրին և նրա ընկեր Մինաս վարդապետը, որոնք, բացի Թուսաստանից, եվրոպական այլ պետությունների դռներն ևս անդադար բախում էին հայոց անկախության գործը աջողացնելու համար» (10,44): Աջողացնել բառը նա կարող էր փոխարինել լուծել նորմավորված կամ գլուխ բերել խոսակցական, բայց և միանգամայն գրական ընդունելի ձևերով, սակայն նա գերադասում է բարբառայինը: Կարծում ենք, աջողացնելը միտքը ճիշտ ներկայացնելուց բացի իր մեջ ունի հեղինակի զգայական վերաբերմունքը, փսոսանքի, ցավի երանգով, մի բան, որ չկա դրան հոմանիշ մյուս ձևերի մեջ: Ուրեմն, բարբառային ձևը խոսքի մեջ ոճական դեր է ունեցել, որն էլ պատճառ է դարձել այդ բառի նախապատվությանը:

Մեկ ուրիշ դեպքում բարբառային կամ խոսակցական ձևը օգտագործվում է որպես պատրաստի կառույցի բաղադրիչ. այսպես, հեղինակը իր հոդվածներից մեկը վերնագրում է «Պարկապուկ ածողները գրականություն մեջ» (10,154), որտեղ ընդգծած պարկապուկ ածողները պատրաստի կառույց է և նրա ոճական արժեքով գործածությունը, կարծում ենք, ապացուցելու կարիք չի զգում: Մյուս կողմից, Բաֆֆու հրապարակախոսական բառապաշարը այդ տարիներին խիստ կանոնավորվում է, և այնտեղ սկսում են առատորեն ներթափանցել այնպիսի բառեր, որոնք առավել զրբային են, հեռու խոսակցական լեզվից: Բաֆֆին տեսնում է, որ հայերենի նորմավորումը միտում է ցուցաբերում հեռանալու լեզվի խոսակցական տարբերակից իր մեջ ներառելով հիմնականում քիչ գործածվող զրբային բառեր: Այդպիսի բառեր են՝ անցքեր (դեպք), առավել թանկագին (10,7), անկման պատճառ (10,8), անմիաբանություն, երկպառակություն, մահացու ախտ, շինծու (ապացույցներ), իրողություն (աղետալի), հյուսվածքներ (10,9), գետեղված էին, անմատչելի լեռներ, ջլատել, բախտախնդիր, արվեստագետ, անհատ, բռնանալ (10,10), մատնել է (օտարի ձեռքը), շահեր, կրքեր, հպատակ, առտնին, անբռնաբարելի (զգացմունք) ստինքով, ընտանեկան (10,11), գյուրախար, բովանդակել (10,13), անձուրացություն, հյուսվածք, սկզբունքները, մաքառում, նկատումներ, ընթերցող, համառոտ, կուսական (անտառ), թավուտներ (10,15), թշվառ, անաչառ (10,17), անոթներ, տաճար, եկեղեցու սպասներ, թեյ, քաղցրավենիք, նշույլներ, մտերմություն, ներկայացուցիչ, համակրություն (10,21), երևույթներ, հեռատես, եկեղեցական անհոգություն, խաբուսիկ, քաղաքակրթություն (10,26), ասպատակել, բանակցություններ, սպառնական ձև (10,39), ընդարձակ, ասպարեզ, կենցաղավարություն, ընթերցող (10,41) հնախոսության պրոֆեսոր, խղճմտավոր (10,42), անկատար (10,43), թերի, ծովեղրյա, երևելի, բախել (10,44), ամփոփել, մասամբ, անհոգ, ձեռնահաս (10,45), ուսուց-

չուհիներ (10,49), իրավացի լինել (10,54), համամիտ, համակում, առնչութ-  
յուն (10,56), անմաքուր, խռովարար (10,57), ասաց (10,58), ստահակութ-  
յուն, ապտակը (10,60), ընթերցողներ, պատկառանք (10,61), զգեստներ, կո-  
դոպտել, հարստահարել (10,64), ընթերցարան, գրադարանապետ (10,67),  
մտահայեցողություն (10,69), հետազոտել (10,69), հարևանցի (10,71) և  
այլն:

Հետեյալ օրինակում «Ինչպես արդար և խղճմտավոր դատավորի հա-  
մար զանազանութուն չունի, թե ինչ կրոնի և ազգության է պատկանում,  
մեղադրվածը, այնպես էլ ճշմարիտ կրիտիկոսի համար պետք է զանազա-  
նութուն չունենա, թե ինչ բանակի կամ կուսակցության է պատկանում  
հեղինակը» (10,69) սպասելի էր, որ հեղինակը զանազանութուն բառի փո-  
խարեն պետք է օգտագործեր ժամանակի խոսակցական լեզվում շատ տա-  
րածված տարբերություն բառը (տարբերություն չկա), որը բխում է նաև  
կառուցված խոսքի բովանդակությունից, սակայն Րաֆֆին նախապատ-  
վությունը տալիս է առաջինին: Այս բառի գործածություն պատճառն այն  
է, որ հեղինակը խուսափել է իր խոսքում գործածել ժողովրդական լեզ-  
վամտածողությունը ներծծված տարբերություն բառը, որովհետև այն չի  
բավարարել լեզվամշակման Րաֆֆիական ճաշակը՝ գրական նորմայի հա-  
յեցակետից: Այստեղ զանազանութուն բառը միակը չէ, որ գործածել է հե-  
ղինակը, որպես առավել քիչ գործածական, առավել գրքային բառամիա-  
վոր: Այդպիսիք են նաև խղճմտավոր, ազգութուն, լատկանել, այնպես,  
ճշմարիտ, բանակ, կուսակցություն և այլն: Սա նշանակում է, որ լեզվամ-  
շակման երրորդ շրջանում հեղինակը բառագործածություն հարցում ա-  
ռաջնորդվել է այսպիսի սկզբունքով. խուսափել լեզվի խոսակցական  
տարբերակում բազմիցս կրկնված բառամիավորներից և դրանք փոխարի-  
նել գրքային, քիչ գործածվող, բայց և ժամանակի գրական զգացողութ-  
յանն ու նորմային համապատասխանող ձևերով: Այս իրողությունը ոչ այլ  
ինչ էր, եթե ոչ ժամանակի խոսակցական հայերենի բառապաշարի «գրա-  
բարացում» որը «նոր գրական հայերենի կազմավորման անխուսափելի ու-  
ղին էր»<sup>7</sup>:

Շարունակեք բնագրային օրինակները. «Ճշմարիտ բանաստեղծը խիստ  
հաստատ հավատ ունի դեպի իր կոչումը, և եթե կրիտիկան անիրավացի  
կերպով է վերաբերվում դեպի նա, դրա փոխարեն նա դտնում է սաստիկ  
պաշտպանություն ընթերցող հասարակության համակրության մեջ»  
(10,83): «Եվ այսպես», իր նկատողությունների մեջ պ. Հայկունին բոլորո-  
վին ներելի է համարում իրողությունները սխալ կերպով պատմել, փաստե-  
րը հեղաշրջել, բնագիրը աղավաղել, որպեսզի կարողանա իր ցանկացած  
հետևանքը դուրս բերել» (10,111), «Նա մտածեց ավելի նշանավոր գործե-  
րով քավել իր նշանավոր հանցանքները» (10,255), «Մեկիք Ջումշուգն ան-  
ձամբ առաջնորդեց նրան, տարավ Շուշի բերդը, որը առանց ընդդիմության  
իր դռները բաց արեց ներքինի թագավորի առաջ» (10,231) և այլն: Օրի-  
նակներում ընդգծած ձևերը ապացուցում են մեր կողմից կատարված դի-  
տողություն իսկությունը: Այդպիսի օրինակներ կարելի է ցույց տալ Րաֆ-

7 Ռ. Ի չ ի ս ա ն յ ա ն. Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն. Երևան,  
1978, էջ 141:



ֆուլ 80-ական թվականներին գրած ստեղծագործությունների ցանկացած էջում:

Մյուս կողմից Րաֆֆու հրապարակախոսությունյան մեջ 80-ական թվականներին ամբողջովին վերանում են գրաբարյան բառամիավորների գործածությունները: Այստեղ այլևս չեն հանգրիպում ցուցական և անձնական դերանունների գրաբարյան սորա, դորա, նորա, մեք և սրանցով կազմված գրաբարյան բազմաթիվ ձևեր, ինչպես նաև վրա կապի վերա ձևը, որը թեև սակավ հաճախականությունը, բայց և այնպես հանգրիպում էր Րաֆֆու 70-ական թվականների վերջում գրված գործերում: Նրա 70-ական թվականներին հրատարակած հոդվածներում շատ է տարածված թվական բառի փոխարեն ամի գրաբարյան ձևի գործածությունը: Այսպես. «Դա մի պաշտոնական հրատարակություն է, որ դուրս է բերված Կ. Պոլսի պատրիարքարանի արձանագրություններից և 1876 ամի սեպտեմբերի ներկայացրած է տեղային ազգային ժողովին» (9,225) կամ «Հիշյալ «Տեղեկագրքի» բովանդակած խնդիրները ... հասնում են մինչև 1872 ամի ապրիլի 11-ը» (9, 225-226) և այլն:

Նույնը կարելի է ասել նաև երեց բառի գործածությունյան մասին.

«... Իսկ ընտանիքի բոլոր անդամները խոնարհվում են գերդաստանի երեցների առջև» (9, 344), որտեղ երեց նշանակում է ավագ, մեծ:

80-ական թվականներին այս և նման բառերի գործածությունները իսպառ վերանում են և փոխարինվում աշխարհաբարյան ձևերով. «Մենք ունենք այդ մասին մի փոքրիկ գրքույկ միայն, որ տպվեցավ 1871 թվին էջմիածնում...» (10,49), «Թերթիկի առաջին երեսի վրա գրված հիշատակարանից երևում է, որ հիշյալ Ավետարանը գրված է եղել Վանա երկրի Ավանց գյուղում հայոց Ռիսլ (1048) թվականին...» (10,47), «Բայց ինչ որ հետաքրքիր է պարոնի ճյուղագրությունյան մեջ, այդ այն է, որ Հասան-Ջալալ մեծը և Մուղալ Խաչենու իշխանը (երկուսն էլ տղամարդ) ծնում են Աթաբեկ առաջինին (դարձյալ տղամարդ)» (10,151) և այլն:

Ուրեմն բերված օրինակներից կարելի է եզրակացնել, որ լեզվի «գրաբարացման» խնդրում Րաֆֆին միանգամայն ճիշտ մոտեցում է ցուցաբերում, և 80-ական թվականներին լեզուն ոչ թե «գրաբարանում» է, այլ ըստ հարկի նորմավորվում: